

ՓԵՏՐՎԱՐ 2023

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



Երևան 2023

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	4
1.1.1. Ջրահեռացման համակարգի կառավարում	7
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	5
1.3. Ջրահեռացման համակարգ	6
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	7
1.5. Էներգահամակարգ	7
1.6. Մեքենա-մեխանիզմներ	8
2. Առևտրային տնօրինություն	9
2.1. Բաժանորդների տվյալներ	10
2.2. Հասույթ	10
2.3. Գանձում	11
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	12
2.5. Ջրաչափեր	13
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	14
3. Տեխնիկական տնօրինություն	15
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	16
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	17
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	19
3.4. Ջրատար համակարգի բարելավում	19
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	21
3.6. 1-85 թեժ գիծ	22
4. Լրատվական ծառայություն	23
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	26
5.1. Փաստաթղթերի մշակում	27
5.2. Դասընթացներ/սեմինարներ	27
5.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	29
6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	30
6.1. Համակարգչային ցանց	31
6.2. Ինտերակտիվ համակարգ	31

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Երևան» ՇՏ սպասարկման տարածքում իրականացվել են վթարա-որոնողական և ջրագծերի ու կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Վայոց ձորի մարզ

● «Եղեգնաձոր» տեղամասի աշխատակիցների կողմից Եղեգնաձոր քաղաքի Այգեձոր փողոցից դեպի Սյունիքի փողոց կառուցվել է L=70զմ d=63մմ պեթ ջրագիծ: Շահագործումից հանվել է L=80զմ d=63մմ պեթ ջրագիծ:




Արմավիրի մարզ



● «Էջմիածին» տեղամասի աշխատակիցների կողմից Արմավիրի մարզի Նորակերտ, Այգեկ, Բաղրամյան և Մուսալեռ գյուղերը սնող d=300մմ ջրագծի վրա կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է մոտ 10լ/վ ջրակորուստ: Կորուստներից խուսափելու նպատակով աշխատակիցների կողմից, սեփական ուժերով ծրագրի շրջանակներում, վերակառուցվել է d=300մմ մոտ L=1200զմ ջրատարի վթարային հատվածը՝ պեթ խողովակով:

1.1.1. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

● «Էրեբունի» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Մուրացան և Ռոստովյան փողոցների խաչմերուկում գտնվող d=250մմ կերամիկական կոյուղագիծը պարբերաբար խցանվում էր և շահագործման համար ոչ պիտանի վիճակում էր: «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է հին կոյուղագծի փոխարինում նոր d=250մմ L=12զմ/մ երկշերտ ծալքավոր պեթ խողովակով, որի արդյունքում կոյուղագիծը գործում է անխափան:



Փետրվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2471
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	56512
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	44395
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	18470
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	164
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1538
Կառուցված ջրագիծ	մ	3880
Կառուցված կոյուղագիծ	մ	364
Վերացված գաղտնի վթարներ	հատ	17
Փոխարինված փական	հատ	33
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	345
Մաքրված դիտահոր	հատ	549
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	32
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	745
Ջրահեռացման ցանցում	հատ	1087
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Փետրվար ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	627	677	885

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է փետրվար ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	120	4	1	0	3	1	1	0	0	0	130
Փոխարինված	370	63	34	0	8	11	17	3	0	4	510
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	174	5	2	0	3	0	2	0	1	0	187
Ընդամենը	664	72	37	0	14	12	20	3	0	4	827

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետ է տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 827 ջրաչափ: Կատարված աշխատանքների 80 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Փետրվար ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արարկիր	0	182	47
2	Քանաքեռ-Զեյթուն	0	257	0
3	Մաշտոց	0	240	0
4	Շահումյան	0	199	72
5	Շիրակ	285	332	5
6	Արթիկ	50	75	0
7	Ապարան	0	52	0
8	Ալավերդի	1970	19	0
9	Աշոցք	0	9	0
10	Բերդ	0	11	0
11	Իջևան	0	46	6
12	Լոռի	0	204	0
13	Նոյեմբերյան	0	11	0
14	Սպիտակ	0	19	0
15	Ստեփանավան	0	12	6
16	Թալին	0	14	0
17	Տաշիր	0	8	0
18	Չարենցավան	0	79	0
19	Արովյան	0	82	4
20	Հրազդան	0	75	0
21	Կենտրոն	120	241	0
22	Հյուսիս	0	250	13
23	Հարավ	0	330	0
24	Էրեբունի	0	154	18
25	Արմավիր	0	124	0
26	Արտաշատ	0	130	191
27	Էջմիածին	0	110	0
28	Աշտարակ	1626	30	0
29	Արարատ	0	64	16
30	Մասիս	0	72	0
31	Գավառ	0	17	0
32	Սևան	0	66	0
33	Մարտունի	0	22	0
34	Վարդենիս	0	16	0
35	Ճամբարակ	0	8	0
36	Դիլիջան	47	43	0
37	Վայք	35	17	0
38	Եղեգնաձոր	50	12	0
39	Ջերմուկ	0	57	0
40	Սիսիան	0	34	0
41	Գորիս	0	35	4
42	Կապան	0	97	0
43	Մեղրի	0	36	0
	Ընդամենը	4183	3891	382

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

● Վարդենիս կեղտաջրերի մաքրման կայանի ավազը տեղափոխող հորիզանական կոնվեյերի պտուտակը մաշվել էր, որի պատճառով կոնվեյերը խցանվում էր: Արդյունքում ձեռք բերվեց նոր պտուտակ և փոխարինվեց, որի արդյունքում կոնվեյերը աշխատում է բնականոն ընթացքով: Խախտվել էր նաև մանր ճաղավանդակի քերիչ սանրը, որը կարգաբերվեց և այժմ աշխատում է բնականոն ընթացքով:

● Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանում պոմպերից մեկը աղմուկով էր աշխատում: Պոմպը հորից դուրս բերելուց հետո պարզ դարձավ, որ բանվորական անիվը խցանվել էր, որն էլ մաքրվեց և տեղադրվեց: Շարքից դուրս էր եկել նաև հակադարձ փականը, որը փոխարինվեց նորով, և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

● Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղի ռոտորի ածխե թիթեղները մաշվել էին և այդ պատճառով օդ չէր մղվում դեպի սարքավորումներ: Արդյունքում դրանք փոխարինվեցին նորով և այժմ օդամուղը աշխատում է բնականոն ընթացքով: Ավազի կոնվեյերի մեխանիզմում կատարվեց որոշակի փոփոխություն, որի արդյունքում կոնվեյերը կծառայեն ավելի երկար: Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	53,431	28.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	53,355	16.2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	154,095	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	65,530	5.4
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	107,204	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	15,060	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	7,800	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,500	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	24,900	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 364 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 259 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 3 հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Փետրվար ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման նպատակով փետրվար ամսվա ընթացքում նորոգվել են թվով 4 մեքենայի արգելակման համակարգերը, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները: Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսասոնիններ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ: Փոխարինվել է թվով 48 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր և գտիչներ:



Թվով 4 մեքենա-մեխանիզմի անվաղողեր փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 1 ավտոմեքենայի մարտկոց փոխարինվել է նորերով:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 3 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ոռոգիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 4 մեքենայի վրա փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 2 մեքենայի վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 12 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 6 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 6 մեքենաների վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 3 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Հիդրավլիկ համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են խցուկներ, բարձր ճնշման մղիչներ, ռետինե խողովակներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.03.2023թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 596,786 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2023թ. փետրվար ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	664,490	569,435	85,7
	Իրավաբանական անձ	31,428	27,351	87,0

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	741,113	598,726	80,8
	Իրավաբանական անձ	36,863	26,081	70,8

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել է տվյալների բազա է մուտքագրվել թվով 1144 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Փետրվար ամսվա ընթացքում ստուգաչափվել է 5390 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 02.2023
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2131	1385	258	3774
	Իրավաբանական անձ	1173	339	104	1616
	Ընդամենը	3304	1724	362	5390

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ փետրվար ամսին փոխարինված 5390 ջրաչափերի մոտ 39 %-ը (կամ 2086 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 349,699 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Փետրվար ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,174 մլն. դրամ (93 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Փետրվար ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 124 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 19.1 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը: Տեղեկատվությունը տրվում է 01.01.2023-01.02.2023թ. թ.ժամանակահատվածի կտրվածքով:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2023թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
19168	656807378	8085	830722071	406	66630829	12583	1625188995	9346	1042729213

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 42 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.03.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	9,998	2,246
Բնակիչ-բաժանորդներ	7,156	1,480
Իրավաբանական անձեր	2,842	766

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 319.6 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.03.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	710,338	597,439	84.11	35,790	26,074	72.85
	Առանց ջրաչափի	30,775	1,287	4.18	1,073	7	0.65

Տվյալների բազայում 01.03.2023թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	881,601	391,465	44.40	39,543	9,984	25.25

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6289 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 905 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2428	1992	81.9
գ.Պոռշյան	1659	1129	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5964	1908	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 14052, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 13777, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 3276, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 4176, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2308, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3408 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5917 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	395	165,294	31,149,359

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի փետրվար ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.5%, ինչը նույն է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Ջրամատակարարման շարունակականություն Երևան




Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 51 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2023թ-ի փետրվար ամսին, 2022 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 108 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 135 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 8339 կՎտ.ժ (1,8 %), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 19 պոմպակայան է ավելացել «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 19 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 11895 կՎտ.ժ, իսկ առանց այս պոմպակայանների, էլ. էներգիայի ծախսը կնվազեր 3546 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Պոմպակայանների ուսումնասիրություն


Թվով 25 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 17 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները: Թվով 364 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 259 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՋ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 3 հասցեում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում երկու հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով.

- Շարուրի 26 (She-44),
- Բագրատունյաց 15 (She-81):


Տեղադրված ընդհանուր 72 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 13329 կՎտ.ժ՝ 14%:



Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ


- Հաշվետու ժամանակահատվածում 11 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:
- Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 160 145 ԿՎտ.ժ կամ 16,91 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



- Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 69881 ԿՎտ/ժ/ամիս կամ 3,95 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



- Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 171 224 ԿՎտ/ժամ կամ 4,44 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեռլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են փետրվար ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.


Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Երևանի Ձեյթուն տեղամասի Թբիլիսյան խճուղու հարակից տարածքների ջրագծերի ուղղումներ և թարմացումներ	քաղաք	1
Էրեբունի տեղամասի Բունազյան, Միչուրին, Սունդուկյան փողոցների, Արաբկիր տեղամասի Սունդուկյան փողոցի, Շահումյան տեղամասի Մեծարենց, Տիչինա, Հոֆաթյան փողոցների ջրագծերի վերակառուցման նախագծերի թվայնացում	փողոց	7
Տավուշի մարզի Իջևան քաղաքի ջրագծերի, ջրատարների ուղղումներ և թարմացումներ տեղամասից բերված տվյալների հիման վրա	քաղաք	1
ԱՏ համակարգ է անցկացվել, թվայնացվել, վերանայվել Լոռու մարզի համայնքների ջրագծերը	հայայնք	6
Արարատի մարզի Մարմարաշեն գյուղի ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցում	գյուղ	1
Տավուշի և Գեղարքունիքի մարզերի Վեդիա Ջուր ՓԲԸ սպասարկվող բնակավայրերի փողոցների և շենք/շինությունների թվային շերտերի թարմացում և բազավորում	մարզ	2
Բերդ քաղաքի հիդրավիլիկ մոդելավորում	մոդելավորում	1
212 տեխնիկական պայմանների, 59 սխեմաների թվայնացում	տեղայնամաններ	212
SCADA համակարգում առկա Երևան քաղաքի ջրատարների, ՕԿՁ-ների, հոսքարափերի, փականների սխեմայի իրական պատկերի արտաբերում ԱՏՀ-ում	քաղաք	1
Կառուցված ջրագծերի երկարությունը Երևանում	մ	1330
Երևանում շահագործումից հանված ջրագծերի երկարությունը	մ	93
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական կետերի ուղղում	կետ	1405
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական կետերի ուղղում	կետ	70
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	53
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	971
Երևանում կառուցված կոյուղագծերի երկարությունը	մ	110
Տեղադրված կամ փոխարինված փականներ	փական	72
Տոպոլոգիական սխալների ուղղում	հատ	2000
Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2516
Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9297
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1790
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1813

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք փետրվար ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը

Արգնի 2

Ջրատարի վրա «Լիպոյի ջրթողների» մոտ կատարված ապօրինի աշխատանքների պատճառով ջրատարը զրկվել էր, որի հետևանքով առաջացել էր ≈ 300 լ/վ վթար: Կազմակերպվել է ջրատարի կանգառ, վթարը վերացվել է «Արաբկիր» ՇՏ-ի կողմից, և ջրատարի բնական աշխատանքը վերականգնվել է:



Ջրատարի վրա առաջացել էր վթար նաև Կորեայի ձորում՝ $Q=25$ լ/վ ծավալով:

Գառնի-Երևան

Ջրատարի վրա՝ Բանավանի տարածքում, էլեկտրացանցի կողմից իրականացված աշխատանքների ընթացքում ջրատարը փասավել էր: Ճնշման նվազեցման նպատակով անջատվել են Գառնի պ/կ-ի պոմպերը, ինչը հնարավորություն է տվել վերականգնելու ջրատարի փասաված հատվածը:



ՋՀԿ բաժնի կողմից կատարվել են նաև ջրատարների շրջայցեր ու չափումներ, որոնց ընթացքում հայտնաբերված թերությունների և կորուստների մասին տեղյակ է պահվել շահագործման տեղամասերին:

Գոտիավորման աշխատանքներ

Քաղաք Գյումրի

● Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ կատարված ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է վթար Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ և Շարա Տայան փողոցների խաչմերուկով անցնող D=25մմ ջրագծի վրա: Քանի որ տվյալ հատվածում առկա է նոր ջրամատակարարման ցանց, ուստի D=25մմ ջրագիծը միացվել է նոր ջրամատակարարման ցանցին: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է D=250մմ, L=370մ թուջե և D=50մմ, L=320մ պողպատե ջրագծեր: Տնտեսվել է մոտ 1,5-2 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Սպիտակ

● Սպիտակ տեղամասի հետ համատեղ իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Չախկալի աղբյուրից դեպի Գրիգոր Լուսավորիչ ՕԿՁ-ն սնող D = 530մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q = 15լ/վ ջրաքանակ:



Քաղաք Երևան



● Քանաքեռ Ջեյթուն տեղամասում իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Ազատության 2 շենքի դիմաց D=90մմ ջրագծի վրա: Ներսրսկման եղանակով փոխարինվել է L = 90մ հատված: Արդյունքում տնտեսվել է Q = 2լ/վ ջրաքանակ:


● «Արաբկիր» տեղամասում իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Գյուլբենկյան 19 շենքի մոտով անցնող D=300մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվել է Q=8լ/վ ջրաքանակ:



● «Շենգավիթ» տեղամասում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Բագրատունյաց 22 շենքի բակով անցնող $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվել է $Q = 3$ լ/վ ջրաքանակ:



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մայիսյան 29/3 շենքի մոտով $D=150$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվել է $Q = 3$ լ/վ ջրաքանակ:



● «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Արզումանյան 12 շենքի $D = 80$ մմ թուջե մուտքագծի վրա: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվել է $Q = 2$ լ/վ ջրաքանակ:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Արմավիրի Լեռնագոգ քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով խափանված 17/7լ/ժ արտադրողականությամբ դոզավորման պոմպը փոխարինվել է նորով:



● Քաղաք Շամշադինի Բերդ քլորակայանում նորոգվել է հեղուկ քլորի համակարգի դոզավորման գլխիկը, ինչն էլ ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:



● Աշոցքի Ղազանչի քլորակայանում դոզավորման պոմպի փասաված մեմբրանը փոխարինվել է նորով՝ ապահովելով հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքը:



● Քաղաք Արմավիրի Մեծամոր քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է հեղուկ քլորի համակարգի խցանված վակուում կարգավորիչի նորոգում:



● Քաղաք Երևան Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում պահեստավորելու նպատակով վերանորոգվել է հեղուկ քլորի հնամաշ վակուում կարգավորիչը:

● Քաղաք Չարենցավանի Ֆանտան քլորակայանում հիպոքլորիդի համակարգի հնամաշ EasyFlo տարան փոխարինվել է նորով, ինչն էլ ապահովել է հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքը:




3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 31760 զանգ:

● Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 9523 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 7391 զանգ (77,6%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2132 զանգ (22,4%):

● Շահագործման վերաբերյալ ստացվել է 22237 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 16859 զանգ (75,8%), իսկ մարզերինը՝ զանգ (24,2%):



● 2022թ. փետրվարի համեմատ՝ 2023թ. փետրվար ամսին 3,27 %-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակն ավելացել է 10,7 %-ով:

● 2022թ. փետրվարի համեմատ՝ 2023թ. փետրվար ամսին 12%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 12%-ով ավելացել է 5 բուսեից ավել զանգերի քանակը և 18%-ով ավելացել է հայտարարությունների լուսն ավտոմատ ծառայության միջոցով: 2022թ. փետրվարի համեմատ՝ 2023թ. փետրվար ամսին 13,12%-ով ավելացել են ջրամատակարարման բողոքները:



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր

	Ստորաբաժանում	2022 փետրվար	2023 փետրվար	
Առևտրային	Ընդամենը	9845	9523	-3.27%
	Երևան	7782	7391	-5.02%
	Մարզեր	2063	2132	3.34%
Շահագործում	Շահագործում	20088	22237	10.70%
	Երևան	15352	16859	9.82%
	Արարկիր	3773	2615	-30.69%
	Քանաքեռ-Զեյթուն	1001	1205	20.38%
	Մաշտոց	2299	3446	49.89%
	Շահումյան	2132	1727	-19.00%
	Շենգավիթ	1941	2433	25.35%
	Կենտրոն	2330	2408	3.35%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	1125	1261	12.09%
	Էրեբունի	751	1764	134.89%
	այդ թվում կոյուղու վթար	82	161	96.34%
	այդ թվում դիտահորի խցանում	4696	5121	9.05%
	ՍԱՐՁԵՐ	4736	5378	13.56%
	Հարավ	2476	2830	14.30%
	Հյուսիս	2260	2548	12.74%
	այդ թվում կոյուղու վթար	27	36	33.33%
այդ թվում դիտահորի խցանում	2136	2275	6.51%	
Ընդամենը	29933	31760	6.10%	

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հաշվետու ամիսը կայուն և ըստ էության առանց արտակարգ պատահարների աշխատանքի ժամանակաշրջան հանդիսացավ ՎեոլիաԹիմի համար, ինչն իր արտահայտությունը գտավ Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ գործունեությունում:

Միակ հանրային հնչեղություն ստացած իրադարձությունը թերևս փետրվարի 7-ին «Արգնի 2 - Երևան» մայրուղային ջրատարի վթարն էր՝ Կոտայքի մարզի Քանաքեռավան գյուղի հարակից կիրճում, որի պատճառներին և վերացման աշխատանքներին տնօրինության հանձնարարությամբ անմիջապես անդրադարձավ ՀԿԲ-ն:




Այսպես, արդեն ժամեր անց Ֆեյսբուք սոցիալական ցանցի ընկերության էջում հրապարակվեց տվյալ հանգամանքով պայմանավորված Արաբկիրում ջրանջատման մասին հաղորդագրություն, այնուհետև անդրադարձ կատարվեց վթարի պատճառ հանդիսացած ապօրինի քարաթափմանը համապատասխան տեսանյութի հրապարակմամբ, ի վերջո, արդեն կեսգիշերին գրառում կատարվեց այն մասին, որ ՎեոլիաԹիմի բարձր մասնագիտական որակների շնորհիվ նախատեսված ժամկետից շուտ ավարտվեց վթարի հետևանքների վերացումը և վերագործարկվեց ջրատարը:

Միևնույն ժամանակ «Կենտրոն» հեռուստաալիքի միջոցով պատաստվեց և «Էպիկենտրոն» լրատվական ծրագրով 2 անգամ էթեր հեռարձակվեց հաղորդում տվյալ արտակարգ պատահարի մասին, սպառողներին ցույց տալու համար, որ ջրանջատումը հետևանք է Վեոլիայից անկախ հանգամանքների:

Իսկ հաջորդ առավոտ Վեոլիա ջուր ընկերությունը ևս մեկ հրապարակմամբ հույս հայտնեց, որ պատկան կառույցների կողմից իրոք կձեռնարկվեն արդյունավետ միջոցներ Հրազդանի կիրճում /և ոչ միայն/ ապօրինի քարաթափումները դադարեցնելու

և դրանով պայմանավորված տվյալ, մայրաքաղաքի համար շատ կարևոր, մայրուղային ջրատարի վթարները բացառելու նպատակով:

Այլ վթարներ էլ են եղել փետրվարին, որոնց մասին ՀԿԲ-ն նպատակահարմար է համարել ծանուցել սպառողներին, սակայն դրանք ավելի սահմանափակ ընդգրկման կամ արագ վերացման արդյունքում հանրության շրջանում նվազ արձագանք են ստացել: Օրինակ, «Խարբերդ» ՕԿՁ-ից դեպի Արարատի մարզի Մարմարաշեն, Ջրահովիտ, Արևաբույր, Նոր Խարբերդ ու Նոր Կյուրին գյուղեր ձգվող ջրագծի վթարը, Վայքը սնող ջրատարի վթարը, Վարդենիսը սնող «Շատջրեք» ջրատարի վթարը, Դիլիջանում «Գոլովին» ՋՄԿ-ից սկիզբ առնող ջրատարի վթարը, «Չախկալ-Մալտակ» ջրագծի վթարը, որից սնվում են Մալտակ քաղաքն ու հարակից յոթ գյուղեր:



Այս մասին գրառումները ուղեկցվել են ձյունոտ տեղանքի, տեխնիկայի կամ մասնագետների աշխատանքի մասին պատմող լուսանկարներով և տեսանյութերով՝ հրապարակումների արդյունավետության բարձրացման համար:

Դեռևս դեկտեմբերին սկսված և ցուրտ եղանակներով պայմանավորված խնդիրները համակարգում շարունակվել են նաև փետրվարին, սակայն ավելի նվազ ծավալներով, իսկ որ ամենակարևորն է՝ ՎեոլիաԹիմը սովորել է դրանք հաջողությամբ լուծել: ՀԿԲ-ն, օրինակ, լուսաբանել է Վանաձորում «Լոռի» սպասարկման տեղամասի և Վեոլիայի մյուս ծառայությունների կողմից գերմանական KFW բանկի սկսած, բայց չավարտած ծրագրով կառուցված ջրագծերը սեփական նախաձեռնությամբ բաշխիչ ցանցին միացնելու աշխատանքները՝ քաղաքի որոշ թաղամասերում ջրամատակարարման բարելավման նպատակով:



Մյուս դեպքերում փետրվարին ՀԿԲ-ն փորձ է արել սպասարկվող բնակավայրերում և ինժեներական կառույցներում ընթացող աշխատանքների լուսաբանման միջոցով Վեոլիան հանրությանը ներկայացնել որպես կայուն և շարունակապես զարգացող համակարգ:

Այսպես, Արմավիրի մարզի Նորակերտ, Բաղրամյան, Այգեկ և Այգեշատ գյուղերի համար «Էջմիածին» ու «Աշտարակ» շահագործման տեղամասերը կառուցել են 1,2 կմ երկարությամբ ջրատար, Կապանի Մինայան և Ավետիսյան փողոցներում, օգտվելով քաղաքի ասֆալտապատման աշխատանքներից, «Կապան» շահագործման տեղամասը կառուցել է նոր ջրագծեր, Իջևանի «Գետափնյա» և «Գետահովիտ» ՕԿՁ-ների «չոր խցերում» նորով են փոխարինվել հին, ֆիզիկապես մաշված և հաճախ վթարվող փականները, որի շնորհիվ հնարավոր է դարձել ավելի ճիշտ կարգավորել քաղաքի բաշխիչ ցանցի աշխատանքը, իսկ Արագածոտնի մարզի Ագարակ, Ոսկեհատ, Ուջան, Շամիրամ, Կոշ, Դպրեվանք, Նոր Եդեսիա գյուղերը նոր կառուցված ջրատարով միացել են գործող բաշխիչ ցանցին:

Հնարավորության դեպքում ՀԿԲ-ն շարունակել է կրթական նպատակով սպառողներին ներկայացնել համակարգում կիրառվող տեխնիկական միջոցների, սարքերի կարևորության մասին տեղեկություններ: Օրինակ, օգտվելով Երևանի Գլինկայի, Արշակունյաց փողոցներում և Արարատի մարզի Ազատաշեն գյուղում ճնշման կարգավորիչ փականներ տեղադրելու աշխատանքներից, սպառողներին տեղեկացվել է դրանց միջոցով ջրի տնտեսման, բնակավայրերում ջրի ճնշումը ապահովելու եւ բաշխիչ ցանցը կառավարելու դերի մասին:

Տարաբնույթ մյուս հրապարակումների մեջ զգալի քանակ են կազմել ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման մասին հաղորդագրությունները: Այս թվում վառելիքի, շինտեխնիկայի պահեստամասերի, ծախսանյութերի պահանջի: Դա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ արդեն առաջիկայում, գարնանը, եղանակային բարենպաստ պայմանների հետ սկսվելու է 2023թ-ի ներդրումային ծրագրերի իրականացումը, ինչպես շինարարական կազմակերպությունների ներգրավմամբ, այնպես էլ ՎեոլիաԹիմի սեփական ուժերով, ապահովելով Վեոլիայի կայուն առաջընթացը Վարձակալության պայմանագրի կատարման գործում:

Ընդ որում հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. [Veolia.am](https://www.veolia.am) պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/Veolia_Jur) էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Բաժինը, ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներով և ելնելով համակարգերում տեխնաժին վթարների կանխարգելմանը և բացառմանը, ինչպես նաև մարդու կյանքի, առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսում լրամշակել է Ընկերության Արտադրական վտանգավոր օբյեկտների 2023 թվականի ընթացքում նախատեսվող տեխնանվտանգության փորձաքննության աշխատանքների իրականացման տեխնիկական առաջադրանքները և արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնանվտանգության փորձաքննությունների իրականացման պլան-ժամանակացույցը:

5.2. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱԸՆԵՐ


● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները, Ընկերության Երևան Շահագործման տնօրինության թվով 58 աշխատողի համար Բաժնի կողմից կազմակերպվեց և իրականացվեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացը.

- Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ բարձրության վրա» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Անվտանգության պահանջները սարքավորումներ շահագործելիս» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲԲՌԿ ստանդարտի պահանջները թեմաներով:




● Հիմք ընդունելով «Անվտանգության, հիգիենայի և առողջության» ընթացակարգի պահանջները և հաշվի առնելով աշխատողների աշխատանքային պայմանների շարունակական բարելավման, աշխատողների և Ընկերություն այցելող գործընկերների, այլ շահագրգիռ կողմերի առողջությանը և անվտանգությանն ուղղված ռիսկերի կանխարգելման, կառավարման, անվտանգության մասով աշխատողների գիտելիքների ամրապնդման և շարունակական բարելավման, Ընկերության համակարգում անվտանգ աշխատանքի մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը, իրականացվեց, Ընկերության ինժեներատեխնիկական անձնակազմի թվով 1304 աշխատողի համար «Անվտանգության, հիգիենայի և առողջության» ընթացակարգի պահանջներին համապատասխան հրահանգավորում:

2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ




5.3 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 14 քլորակայանում, 7 պոմպակայանում, 2 ՕԿՁ-ում: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսուսնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 11 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանուսների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2023 թ. իրականացված անվտանգության ստուգայքների քանակներն ըստ օբյեկտների



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Համակարգչային ցանց

Հունվար-փետրվար ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Տրամադրվել են նոր համակարգիչներ և հին համակարգիչները նույնպես վերաբաշխվել են: Դրանով իսկ ավարտվել է Առևտրային, ՎՊԿՏ, Գլխավոր տնօրինությունների համակարգիչների վերաբաշխումները:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել ընկերության ներքին համարների համակարգում, որի արդյունքում կազմակերպության բոլոր դեպի բջջային ցանց դուրս եկող զանգերը իրականացվում են 096-300-186 համարով ինչը պետք է զգալի նվազեցնի առկա ծախսերը, բացարձային են կազմում Առևտրային տնօրինության և Շահագործման տնօրինության տեղամասերը, որոնց համար նույնպես առանձնացվել են համարներ (010-300-187, 010-300-188, 010-300-189, 010-300-190, 010-300-191, 010-300-192):
- Կատարվել են մոնիտորինգային աշխատանքներ՝ անվտանգության տեսահսկման համակարգերի ուղղությամբ: Նոր համակարգ է տեղադրվել Ալավերդի տեղամասում:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել՝ անսարք սարքավորումները փոխարինելու նոր սարքավորումներով, ինչպես նաև տեղադրվել են նորերը:
- Գրուպի կիբերանվտանգության դեպարտամենտի հետ համատեղ մշակվել է նոր կիբերանվտանգությանն ուղղված քաղաքականություն՝ Արդյունաբերական կիբերանվտանգությունը բարձրացնելու նպատակով:
- Իրականացվել են Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Իրականացվել են Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Մպասարկվել է մոտավորապես 1500-1630 զանգ SS բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել, սպասարկվել և փակվել է մոտ 1700 SS աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Հունվար-փետրվար ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Մի շարք հաշվետվություններ են պատրաստվել և տրամադրվել ՀԾԿՀ և Ջրային Կոմիտե, ինչպես նաև տարբեր ներքին և արտաքին աուդիտորներին:
- Ինտերակտիվ համակարգում կատարվել են փոփոխություններ, կապված Առևտրային տնօրինության և այլ ստորաբաժանումների գործընթացը ավելի ավտոմատիզացնելու հետ
- Առևտրային տնօրինության տեղամասերի տեսուչների վերաբաշխման աշխատանքներ են իրականացվել
- ՀԾԿՀ ի որոշման հիման վրա կատարվել է մի շարք աշխատանքներ նոր սակագնի և նոր սակագնի հաշվարկման ուղղությամբ
- Նախագվել և տեխնիկական նկարագրեր է կազմվել ցուցմունքների գրանցման նոր բջջային հավելվածի պատրաստման համար
- Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Խախտման արձանագրություններ			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	8	3.13	0.64
Էրեբունի	8	8.40	1.72
Շենգավիթ	34	7.19	1.38
Կենտրոն	16	12.60	2.63
Արաբկիր	26	13.39	2.63
Մաշտոց	51	20.06	3.68
Շահումյան	30	14.05	2.57
Եղվարդ	33	11.53	2.06
Քանաքեռ-Զեյթուն	10	4.99	0.97
ԱԿԲ	119	68.96	13.61
Լոռի	13	4.20	0.88
Շիրակ	12	3.45	0.70
Արթիկ	2	0.45	0.09
Արարատ	12	1.79	0.33
Աբովյան	42	20.46	3.88
Հրազդան	2	0.35	0.07
Ալավերդի	5	1.77	0.35
Աշոցք	2	0.79	0.14
Արտաշատ	16	4.91	0.89
Գավառ	6	3.14	0.63
Գորիս	1	0.06	0.01
Եղեգնաձոր	1	0.52	0.11
Էջմիածին	13	5.77	1.05
Իջևան	27	3.26	0.63
Կապան	1	0.52	0.09
Մասիս	23	7.57	1.38
Մեղրի	2	1.03	0.20
Նոյեմբերյան	1	0.52	0.09
Արմավիր	31	13.86	2.60
Սևան	1	0.18	0.04
Վայք	1	0.26	0.05
Աշտարակ	26	8.35	1.50
Զարենցավան	23	8.98	1.64
Սիսիան	2	0.77	0.15
Ընդամենը	600	257.27	49.38

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)
 Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	21	17.79	44	0.44
Էրեբունի	23	9.01	50	0.78
Շենգավիթ	23	8.90	81	1.81
Կենտրոն	31	46.21	107	4.09
Արաբկիր	27	77.87	58	1.49
Մաշտոց	51	42.56	88	0.78
Շահումյան	28	20.50	88	0.71
Եղվարդ	2	0.59	18	0.64
Քանաքեռ-Զեյթուն	7	9.75	15	0.23
Լոռի	38	79.50	100	0.77
Շիրակ	20	4.70	50	0.30
Արթիկ	10	2.84	37	0.20
Արարատ	14	1.78	52	8.18
Աբովյան	19	24.23	30	0.16
Հրազդան	38	38.03	29	0.23
Ալավերդի	6	1.93	65	1.30
Աշոցք	0	-	11	0.05
Ապարան	2	0.56	1	0.01
Արտաշատ	1	0.25	15	0.09
Գավառ	6	2.07	37	0.49
Գորիս	12	5.16	30	0.15
Դիլիջան	1	1.10	6	0.06
Եղեգնաձոր	6	3.87	43	0.35
Էջմիածին	41	28.65	86	0.73
Թալին	1	1.53	1	0.00
Իջևան	3	1.55	12	0.22
Կապան	24	10.05	61	0.45
Ճամբարակ	1	0.39	4	0.01
Մասիս	6	2.23	30	0.21
Մարտունի	0	-	6	0.05
Մեղրի	0	-	8	0.04
Նոյեմբերյան	0	-	9	0.08
Արմավիր	26	24.52	160	1.14
Զեյթունկ	2	3.92	4	0.08
Սևան	1	0.37	9	0.05
Վայք	0	-	6	0.04
Աշտարակ	1	0.26	4	0.35
Զարենցավան	12	10.13	58	0.59
Սիսիան	1	0.52	24	0.30
Սպիտակ	4	0.39	31	0.26
Ստեփանավան	10	3.06	21	0.10
Տաշիր	1	0.26	9	0.07
Ընդամենը	520	487.01	1598	28.05



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am